# Հաշիվ վավերագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 21 | Օգոստոս | 2019 թ. |
| **[4] Առաքման ամսաթիվ** | | |
| 21 | Օգոստոս | 2019 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 8563645120 |

| Ճշգրտվող հաշիվ վավերագրի | | |
|---|---|---|
| Սերիա | Համար | |
| | | |
| Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ | | |
| | | |

| Պայմանագիր | |
|---|---|
| [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
| 18 Հունվար, 2018 թ. | |

**[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)**

**[7.1] ՀԴՄ կտրոնի համար**

## Արտադրանք, ապրանք առաքող անձ

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)** | 0 | 6 | 9 | 0 | 2 | 0 | 8 | 7 | | |
| **[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը** | 0 | 6 | 9 | 0 | 2 | 0 | 8 | 7 | / | 1 |

| | | |
|---|---|---|
| **[10] Անվանումը** | «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) | |
| **[11] Բանկային տվյալները** | "ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ | N 1570015001210100 |
| **[12] Գտնվելու վայրը (հասցեն)** | ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 | |
| **[13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են** | ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 | |
| **[14] Լրացուցիչ տվյալներ** | | |

## Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձ

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **[15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)** | 0 | 2 | 6 | 3 | 1 | 2 | 6 | 3 |
| **[16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը** | | | | | | | | |

| | | |
|---|---|---|
| **[17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը)** | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ | |
| **[18] Բանկային տվյալները** | ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | N 900011000834 |
| **[19] Գտնվելու վայրը (բնակության վայրը)** | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 | |
| **[20] Լրացուցիչ տվյալներ** | | |

| | | | |
|---|---|---|---|
| **[21] Ում միջոցով** | **Անուն, ազգանուն** | | |
| | **Լիազորագիր** | **Համար** | |
| | | **Ամսաթիվ** | |
| **[22] Մատակարարման (առաքման) եղանակը** | | | |
| **[23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)** | ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 | | |

**[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը**

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | Այդ թվում՝ բնապ. հարկ | Այդ թվում՝ ակցիզ. հարկի գումար |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 38157619 բ/գ. | հատ | 1 | 39400 | | 39400 | | |
| **Ընդամենը** | | | | | | 39400 | | |

**Առաքող՝** PIROGOVA EMMA 6805680298
(անունը, ազգանունը)

**Ստացող** (անունը, ազգանունը)

21/08/2019 14:06:29

Ո ր ո շ ու մ

/ Անբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

,,10,, հուլիսի 2019թ.

ք. Իջևան

ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ե.Ռ.Գալստյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 38157619 քրեական գործի նյութերը.

պ ա ր զ ե ց ի

2019 թվականի մայիսի 10-ին ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Իջևանի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին հատկանիշներով հարուցվել է թիվ 38157619 քրեական գործն այն դեպքի առթիվ, որ 2019 թվականի ապրիլի 28-ին ժամը 17:00-ի սահմաններում Կարինե Լազրի Մարկոսյանն իրենց տան բակում վիճաբանել է Ռազմիկ Կառլենի Մարկոսյանի հետ, որի ընթացքում վերջինիս հասցեին հնչեցրել է սպանության սպառնալիքներ, որոնք վերջինս ընկալել է որպես իրական վտանգ:

Քրեական գործը ենթակայության կարգով ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչություն, որտեղ ստացվել է 17.05.2019թ. և նույն օրը ձեռնարկվել է նախաքննություն:

Ռազմիկ Կառլենի Մարկոսյանը որպես տուժող ցուցմունք է տվել այն մասին, որ ընտանիքի հետ միասին բնակվում է Իջևան քաղաքի Մեհրաբյան 82 հասցեում: Տան մի մասնաբաժնում բնակվում է ինքը ընտանիքի հետ միասին, իսկ մյուս մասնաբաժնում հորաքույրը Կարինե Մարկոսյանը և տատը Շուշիկ Ասլանյանը: 2019 թվականի ապրիլի 28-ին ժամը 17:00-ի սահմաններում իր և Կարինե Մարկոսյանի միջև վիճաբանություն է սկսվել կապված տան հարակից հատվածում գտնվող այգին մշակելու հետ: Վիճաբանության ընթացքում Կարինե Մարկոսյանն իր և իր ընտանիքի անդամների հասցեին հնչեցրել է սպանության սպառնալիքներ ասելով, որ մորթելու է, սպանելու է, ինչն իր կողմից ընկալվել է իրական, քանի որ Կարինե Մարկոսյանը դեռևս 1991 թվականից հաշվառված է Իջևանի հիվանդանոցի նարկո-հոգեբուժական դիսպանսերում և նա ամեն ինչի ընդունակ է:

2019 թվականի հուլիսի 9-ին Կարինե Մարկոսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով:

Կարինե Լազրի Մարկոսյանը որպես մեղադրյալ ցուցմունք է տվել այն մասին, որ մոր Շուշիկ Ասլանյանի հետ բնակվում է Իջևան քաղաքի Մեհրաբյան 82/1 հասցեում, տան մի մասնաբաժնում բնակվում են ինքը և մայրը Շուշիկ Ասլանյանը, իսկ մյուս մասնաբաժնում բնակվում է հանգուցյալ եղբոր ընտանիքը, որոնց հետ գտնվում են անհաշտ հարաբերությունների մեջ: Ռազմիկ Մարկոսյանի հետ 2019 թվականի ապրիլի 28-ին ժամը 17:00-ի սահմաններում չի վիճաբանել, նրան սպառնալիքներ չի տվել, Ռազմիկ Մարկոսյանին այդ օրը տեսել է առավոտյան ժամը 10:00-ի սահմաններում:

,,Իջևան ԲԿ,, ՓԲԸ-ից ստացված գրության համաձայն Կարինե Մարկոսյանը ,,Իջևան ԲԿ,, ՓԲԸ-ի նարկո-հոգեբուժական կաբինետում հաշվառված է 08.04.1991-ից նեյրոինֆեկցիայի մնացորդային երևույթներ էպինոպաներով, անձի փոփոխություն ախտորոշումով:

Նկատի ունենալով, որ Կարինե Մարկոսյանի հոգեկան լիարժեքությունը, և գործի համար նշանակություն ունեցող այլ հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության բնագավառի հատուկ գիտելիքներ, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-246-րդ և 248-րդ հոդվածների պահանջներով,

*որոշեցի*

Թիվ 38157619 քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել «ՀՀ ԱՆ Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի փորձագետներին.

Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը

1. Հետազոտվող Կարինե Լազրի Մարկոսյանը հոգեկան հիվանդությամբ տառապել կամ տառապու՞մ է, թե՞ ոչ, եթե այո, ապա երբվանի՞ց և ի՞նչ հոգեկան հիվանդությամբ:
2. Առկա հոգեկան վիճակից ելնելով հանցագործության կատարման պահին կամ դրանից հետո այդ թվում ցուցմունք տալու պահին Կարինե Լազրի Մարկոսյանն ի վիճակի՞ է ճիշտ ընկալել և վերարտադրել իր և իր շրջապատի անձանց գործողությունները, քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները:
3. Առկա հոգեկան վիճակով Կարինե Լազրի Մարկոսյանը կարո՞ղ է մասնակցել քննչական գործողությունների և դատական նիստերին:
4. Կարինե Լազրի Մարկոսյանը մեղսունակ է, սահմանափակ մեղսունակ, թե անմեղսունակ:
5. Կարինե Լազրի Մարկոսյանը հարկադիր բուժման կարիք ունի, թե՞ ոչ, եթե այո ապա ի՞նչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում:
6. Եթե փորձաքննության ընթացքում կառաջանան այլ հարցեր, որոնք կարևոր նշանակություն ունեն փորձաքննության լրիվության համար, ապա խնդրվում է պատասխանել նաև այդ հարցերին:

*Ընկերության տնօրենին*

Փորձագետներին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածում նախատեսված նրա իրավունքները և պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու և առանց քննիչի թույլտվության նախնական քննության տվյալները հրապարակելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին:

Կարինե Լազրի Մարկոսյանը և թիվ 38157619 քրեական գործը փորձագետին կներկայացվեն փորձաքննության անցկացման օրը:

ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ե.Ո.Գալստյան